# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

**20ԴՊ-ԳՀԾՁԲ-26/1** ծածկագրով գնանշման հարցման Անվտանգության ապահովման /պահնորդական/ ծառայությունների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի արտահերթ նիստի

ք. Երևան

16 դեկտեմբերի 2025թ.

«Երևանի Ջոն Կիրակոսյանի անվան հ.20 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի վարչատնտեսական մասի համակարգողի 26.11.2025թ. թիվ 20-Ա հրամանով ձևավորված գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 16.12.2025թ., ժամը՝ 14:30-ին, ՀՀ ք.Երևան, Մ.Չայլախյան փող. 65/3 շենք հասցեում:

Նիստին մասնակցում էին՝ գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Անահիտ Մխիթարյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Աստղիկ Մելքոնյանը, Հասմիկ Աչիկյանը և քարտուղար Աննա Կարապետյանը:

**<u>«20ԴՊ-ԳՀԾՁԲ-26/1» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ հաջորդող տեղ զբաղեցրած մասնակցին ընտրված մասնակից ճանաչելու մասին</u>**

Գնահատող հանձնաժողովի նախագահ Ա. Մխիթարյանը տեղեկացրեց, որ 11.12.2025թ.-ից «20ԴՊ-ԳՀԾՁԲ-26/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի անգործության ժամկետում գտնվելու ընթացքում առաջին տեղ զբաղեցրած մասնակից՝ «Արմգվարդիա միջազգային կազմակերպություն» ՍՊԸ-ն 15.12.2025թ.-ին դիմել է Պատվիրատուին ուղղված (գրությունը հրապարվում է արձանագրության հետ) ուղեկցող գրությամբ պայմանագիր կնքելու հրաժարականի վերաբերյալ՝ համաձայն հրավերի տեխնիկական բնութագրի պահանջների, որը չի կարող ներկայացնել սահմանված ժամկետներում:

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի բ ենթակետի «Արմգվարդիա միջազգային կազմակերպություն» ՍՊԸ-ն զրկվում է պայմանագիր կնքելու իրավունքից:

**Գնահատող հանձնաժողովը որոշեց՝ որոշում թիվ 1.**
**Անահիտ Մխիթարյան**

1. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով նախաձեռնել նախատեսված ընթացակարգ՝ «Արմգվարդիա միջազգային կազմակերպություն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:
2. Համաձայն «20ԴՊ-ԳՀԾՁԲ-26/1» ծածկագրով գնման հրավերի 8.19-րդ կետի՝ ընտրված մասնակցի կողմից պայմանագիրը չկնքելու (հրաժարվելու) կամ պայմանագիր կնքելու իրավունքից զրկվելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:
3. Հաշվի առնելով, «20ԴՊ-ԳՀԾՁԲ-26/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հաջորդող՝ 2-րդ տեղ զբաղեցրած բավարար գնահատված մասնակցի՝ «Սուր և Նիզակ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած գնային առաջարկը.

**Չափաբաժին 1.** Անվտանգության ապահովման /պահնորդական/» ծառայություններ

| N | Կազմակերպության անվանումը | Առաջարկվող գինը /ՀՀ դրամ/ առանց ԱԱՀ | առանց ԱԱՀ /ՀՀ դրամ/ | Ընդհանուր գինը /ՀՀ դրամ/ Թվերով (տառերով) |
|---|---|---|---|---|
| 1. | «Սուր և Նիզակ» ՍՊԸ | 3990000 /երեք միլիոն ինը հարյուր իննսունինը հազար/ | 798000 /յոթ հարյուր իննսունութ հազար/ | 4788000 /Չորս միլիոն յոթ հարյուր ութսունութ հազար/ |

**Գնահատող հանձնաժողովը որոշեց՝**
**Անահիտ Մխիթարյան**

**Որոշում թիվ 2:** Բավարար գնահատված հայտ ներկայացրած 2-րդ տեղ զբաղեցրած մասնակից «Սուր և Նիզակ» ՍՊԸ -ին ճանաչել հաղթող մասնակից:

*Ընդունվել է որոշում «կողմ»՝ 3, «դեմ»՝ 0*

**1.** «ՀՕԴՊ-ԳՀԾՁԲ-26/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հայտարարել անգործության ժամկետ, հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ժամանակահատվածը:

Անգործության ժամկետի ավարտից հետո ներկայացնել առաջարկ ընտրված մասնակից «Սուր և Նիզակ» ՍՊԸ–ին պայմանագիր կնքելու համար՝ պահանջելով «Սուր և Նիզակ» ՍՊԸ–ից ներկայացնելու որակավորման և պայմանագրի ապահովումները:

*Ընդունվել է որոշում «կողմ»՝ 3, «դեմ»՝ 0*

**Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները, ազգանունները և ստորագրությունները**:

| | | |
|---|---|---|
| Գնահատող հանձնաժողովի նախագահ | | Անահիտ Մխիթարյան |
| անդամներ | | Աստղիկ Մելքոնյան |
| | | Համիկ Աչիկյան |
| քարտուղար | | Աննա Կարապետյան |

**20ԴՊ-ԳՀԾՁԲ-26/1** ծածկագրով մրցութային հանձնաժողովի

նախագահ տիկին Ա.Մխիթարյանին

Հարգելի տիկին Ա.Մխիթարյան

20ԴՊ-ԳՀԾՁԲ-26/1 ծածկագրով մրցույթի հաղթող է ճանաչվել «Արմգվարդիա Միջազգային Կազմակերպություն» ՍՊԸ-ն, որը 2026թ. հունվարի 1-ից պետք է պահնորդական ծառայություն մատուցի «Երևանի Ջոն Կիրակոսյանի անվան հ.20 հիմնական դպրոց» ՊՈԱԿ -ում:

Ձեր կողմից պահանջ է ներկայացվել ներկայացնելու 2026թ-ի հունվարի 1-ից պահնորդական ծառայություն իրականացնող ապագա պահնորդների պահնորդական իրավունքի վկայականները և դրանց կից լիցենզիաները: Նշված փաստաթղթերի ձեռք բերումը տևական պրոցես է, դրանք չենք կարող ներկայացնել պահաջված ժամկետում,ուստի հարկադրված ենք հրաժարվել պայմանագիրը կնքելուց:

«Արմգվարդիա Միջազգային Կազմակերպություն» ՍՊԸ-ի տնօրեն Ց.Գրիգորյան

15.12.2025թ.